

ՍՏԵՂԾՎԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈՒՆԻՑԻԱ



«Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կողմից, Հայաստանում բիզնեսին աջակցող կառույցների մասնակցությամբ ստեղծվեց Հայկական բիզնես կոալիցիան: Դեկտեմբերի 20-ին ստորագրվեց կոալիցիայի ստեղծման հուշագիրը՝ միավորելով բիզնեսին աջակցող 27 կազմակերպություններ:

Գործարարության աջակցման գրասենյակը, որպես բիզնեսին աջակցող և պետական-մասնավոր երկխոսությունը խթանող կառույց ևս միացել է ծրագիրն իրականացնող կոնսորցիումին՝ իր աջակցությունն ունենալով ծրագրի շրջանակներում Հայաստանում ՓՄՁ ոլորտի վերլուծության և հարցումների իրականացմանը, ինչպես նաև նոր ՓՄՁ ռազմավարության մշակմանը:



Հանդիպման ընթացքում տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Հակոբ Ավագյանը կարևորեց բիզնեսի շահերը ներկայացնող կառույցների կարողությունների զարգացումը և արդյունավետ համատեղ աշխատաքը, և նշեց, որ առկա է պետական – մասնավոր երկխոսության ևս մեկ հարթակ՝ ՓՄՁ զարգացման խորհուրդը, որը նախկինում եղել է ամենաարդյունավետը և այսօր վերսկսում է իր աշխատանքը, և որտեղ կարող են ներկայացվել գործարար համայնքի խնդիրները: